ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/40783-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-938-07.10.2024-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը.

1. Նախագծի 2-րդ հոդվածում «8-րդ» թվանշանից առաջ անհրաժեշտ է լրացնել «Օրենքի» բառը:
2. Նախագծի 15-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 37-րդ /***Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու և ծառայության դադարման հիմքերը***/ հոդվածի 3-րդ մասում «Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները» բառերը փոխարինել «Կատարողականի մեկ կիսամյակի գնահատման արդյունքը» բառերով:

   Այսպիսով՝ նախագծով նախատեսված փոփոխության արդյունքում ստացվում է, որ Կատարողականի ***մեկ կիսամյակի*** գնահատման արդյունքը Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում

պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու քաղաքացիական ծառայողի լիազորությունները:

Այս առումով գտնում ենք, որ ընդամենը ***մեկ կիսամյակի արդյունքներով*** քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ կարգավորումը գտնում ենք, որ խնդրահարույց է համաչափության, հանրային ծառայողի հիմնական իրավունքների՝ սոցիալական պաշտպանության և ապահովության և իրավական պաշտպանության ապահովման տեսանկյունից:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ նաև Օրենքի 21-րդ հոդվածի կարգավորումներին, որի համաձայն՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու և (կամ) ծառայողական լիազորությունները վերազանցելու և (կամ) աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու և (կամ) քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները խախտելու դեպքերում ***քաղաքացիական ծառայողի նկատմամբ*** սահմանված կարգով ***կիրառվում են սույն օրենքով սահմանված կարգապահական տույժերը***:

Իսկ կարգապահական տույժերը դասակարգվում են երկու տեսակի՝ թեթև և խիստ.

1) թեթև կարգապահական տույժերն են՝

ա. նախազգուշացում,

բ. նկատողություն.

2) խիստ կարգապահական տույժերն են՝

ա. խիստ նկատողություն,

բ. հիմնական աշխատավարձի իջեցում մինչև 20 տոկոսով, բայց ոչ ավելի, քան բազային աշխատավարձի չափը,

գ. ծառայության դադարեցում:

Այսպիսով ստացվում է, որ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու համար քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող է կիրառվել նախազգուշացում կամ նկատողություն, իսկ մեկ կիսամյակի գնահատականի ցածր լինելու պարագայում քաղաքացիական ծառայողի լիազորությունները կարող են դադարեցվել: Նշվածի համատեքստում գտնում ենք, որ նախատեսված կարգավորումները համաչափ չեն: Ըստ այդմ,

առաջարկում ենք, Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասում «Կատարողականի մեկ կիսամյակի գնահատման արդյունքը» բառերը փոխարինել «Կատարողականի տարեկան գնահատականը, որը կիսամյակային գնահատականների միջին թվաբանականն է,» բառերով:

3. Նախագծի 17-րդ հոդվածի 4-րդ մասում անհրաժեշտ է «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ